ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.12. Արևմտյան Եվրոպա: Տնտեսությունը

• • •

Արևմտյան Եվրոպայի երկրներն ***արդյունաբերության*** զարգացման բնառեսուրսային տարբեր հնարավորություններ ունեն: Մեծ է հատկապես գիտատար, աշխատատար ճյուղերի դերը: Արդյունաբերությունը բազմաճյուղ է և գտնվում է տասնյակ հզոր վերազգային մոնոպոլիաների ձեռքում: **Ի՞նչ հայտնի մոնոպոլիաներ գիտեք:**

• • •

Քիմիական արդյունաբերությունը զարգանում է տեղական և ներմուծվող հումքի ինչպես նաև այլ ճյուղերի թափոնների օգտագործման վրա: Տեսականին լայն է՝ պլաստմասա, սինթետիկ կաուչուկ, քիմիական մանրաթելեր, հանքային պարարտանյութեր: Շատ մեծ է նուրբ քիմիայի դերը՝ օծանելիքի և դեղորայքի արտադրությունը: Լիխտենշտեյնը մասնագիտանում է արհեստական ատամների (պրոթեզներ) արտադրությամբ:

• • •

Արևմտյան Եվրոպայի երկրները մեծ հաջողությունների են հասել ***ծառայությունների ոլորտում:*** Այստեղ գործնականում զարգացած են նրա բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը՝ կոմունալ-կենցաղային, տրանսպորտային, լոգիստիկ, կապի, ապահովագրական, բժշկական, գիտակրթական, ֆինանսական և բազում այլ ծառայություններ:

Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում գործում են համաշխարհային նշանակության բազմաթիվ դրամատներ (բանկեր): Միայն Նիդեռլանդների արտաքին առևտրի շրջանառությունը ավելի մեծ է, քան ամբողջ Աֆրիկա աշխարհամասինը (չհաշված ՀԱՀ-ն), իսկ Շվեյցարիայինը՝ քան Բրազիլիայինն ու Արգենտինայինը միասին վերցրած:

• • •

Արևմտյան Եվրոպայի երկրներն ունեն զարգացած ***սև և գունավոր մետաղաձուլություն:*** Առաջատարներն են Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը: Վերջինս աշխարհում առաջին տեղն է գրավում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող պողպատի (12 տ) արտադրությամբ: Բոլոր երկրների (բացի Լյուքսեմբուրգից) արդյունաբերության մեջ առաջատարը բազմաճյուղ և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված, հիմնականում գիտատար ***մեքենաշինությունն*** է, որի արտադրանքի 50–70%-ն արտահանվում է:

• • •

Գյուղատնտեսությունն առանձնանում է զարգացման շատ բարձր մակարդակով և բարդ ճյուղային կառուցվածքով: Նրան բնորոշ են մեքենայացման, քիմիացման, մշակաբույսերի բերքատվության և անասունների մթերատվության շատ բարձր ցուցանիշները: Կարելի է ասել, որ գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացմամբ տարածաշրջանը հավասարը չունի, հարկ է հիշել, որ ճյուղում զբաղված է տնտեսապես ակտիվ բնակչության ընդամենը 2–3%-ը: ***Անասնապահությունը*** մատակարարում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 3/4-ը:

• • •

Տրանսպորտը: Արևմտյան Եվրոպան ունի տրանսպորտային ուղիների հագեցած ցանց: Այստեղ գործնականում զարգացած են տրանսպորտի բոլոր տեսակները, որոնք ոչ միայն ապահովում են բեռնա և ուղևորափոխադրումներն այդ երկրների ներսում, այլև տարանցիկ դեր են կատարում այլ երկրների համար:

• • •

Բուսաբուծությունը ոչ միայն բավարարում է սեփական պարենային պահանջարկը, այլև «աշխատում է» անասնապահության համար: Այսինքն հսկայական ցանքատարածություններ զբաղեցնում են կերային մշակաբույսերը: Ճյուղում առաջատարը ցորենի, գարու, տարեկանի, շաքարի ճակնդեղի, վուշի, կարտոֆիլի մշակությունն է: